## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

## (ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստի՝ կայացած 21.11.2017 թ.,

Ք.Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

*Արմեն Մատինյանը,Արտյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

*Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոբյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;

Նիստից բացակայում էր՝

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը,* համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված: Մինչ նիստի օրակարգին անցնելը, համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ ինքը նոյեմբերի 17-ին ուղերձ է հղել համայնքի ավագանու խմբակցություններին, ուր առաջարկել և հորդորել է նրանց, քաղաքի առջև ծառացած խնդիրները համատեղ հաղթահարելու, քաղաքի զարգացման բնականոն ընթացքն ապահովելու, մասնակցային կառավարում իրականացնելու նպատակով և՝ ի շահ Վանաձորի, մասնակցել ավագանու նիստերին և մաս կազմել քաղաքի կառավարմանը: Նիստը վարողը տեղեկացրեց նաև, որ ուղերձին արձագանքել են «Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ և խմբակցության ղեկավար Արկադի Փելեշյանը, ում հետ էլ կնքվել է համագործակցության հուշագիր:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել ավագանու արտահերթ նիստի օրակարգը:
Կողմ՝ 20, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝
*Արկադի Լյովայի Փելեշյանին համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին*
զեկ.՝ Մ.Ասլանյան

ԼՍԵՑԻՆ - Արկադի Լյովայի Փելեշյանին համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակելու մասին
- Զեկուցեց համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանը:
ՀՀԿ ավագանու խմբակցության անունից ելույթ ունեցավ Արմեն Մատինյանը և տեղեկացրեց, որ հարցը քննարկվել է խմբակցության նիստին և իրենք կողմ են քվեարկելու Արկադի Փելեշյանի թեկնածությանը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը